Արձանագրություն N 3

ԱԱԿ-16/2-ՇՀԱՊՁԲ-15/16 ծածկարով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

գ.Ամասիա

02 փետրվարի 2016թ.
Ժամը՝ 16:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկոյան
Հանձնաժողովի անդամներ Ն.Սարգսյան, Ս.Վարդանյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան:

1. Անհամապատասխանությունների շտկման մասին
(Ա. Մկոյան)

Ընդունել ի գիտություն, քանի որ հայտերի գնահատման արդյունքում ներկայացրած ծրարներում՝ Հրավերով սահմանված փաստաթղթերում՝ մասնավորապես՝ «Դելտա»ՍՊԸ -ի, Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի, «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի, «Ալֆա-Ֆարմ»ՓԲԸ-ի, «Մեդիտեք» ՍՊԸ-ի հավելված 1-ում և «Ալֆա-Ֆարմ»ՓԲԸ հավելված 4.1-ում արձանագրվել էին անհամապատասխանություններ ՀՀ <<Գնումների մասին օրենքի>> հետ, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց.

Համաձայն ՀՀ Կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին 45-րդ կետի վերը նշված անհամապատասխանությունները շտկելու նպատակով կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը և առկա անհամապատասխանությունները շտկելու նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել ս.թ. փետրվարի 02-ին ժամը 16:30-ին <<ԱՄԱՍԻԱՅԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ, գ.Ամասիա փողոց 2 N 19, 2-րդ հարկ տնօրենի ընդունարան հասցեում:

Սահմանված ժամկետում «Դելտա»ՍՊԸ -ի, Լևոն և Լամարա» Դեղատուն ՍՊԸ-ի, «Կոնցեռն-Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Մեդտեխսերվիս» ՍՊԸ-ի, «Հերմո Ֆարմ» ՍՊԸ-ի, «Ալֆա-Ֆարմ»ՓԲԸ-ի կողմից ներկայացվել են հավելվածների ճշտված տարբերակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0: